

անաչառ ուսումնասիրութեան թերին է անշուշտ, որ մեզինչ շատերն անարգար եւ անմբատած կերպով մղած է հակահրէականութեան: Գատապարտելի տգիտութիւն է չճանչնալ եւ չզննահատել այն բարոյական մեծ դերն, որ հրէայցիքը խաղացած է պատմութեան մէջ եւ այն մեծ երախտիքը, որ մարդկային քաղաքակրթութիւնը պարտական է անոր, գրեթէ ամէն մարդերու մէջ, կրօնական թէ փիլիսոփայական, գեղարուեստական թէ գիտական:

Կէթթօն

Կէթթօն ծնած է իր Օրէնքին հանդէպ Իսրայէլի սնուցած անասման սէրէն: Այդ Օրէնքը Աստուածաշունչի առաջին հինգ գլուխներն են, Մովսէսի հնգամատեանը, զոր իրենք Թօրա կը կոչեն:

Նրեթական Թօրան մագաղաթի նեղ շերտ մըն է իբր 30 մետր երկայնութեամբ, որ կը փաթթուի երկու փայտէ գլանիկներու վրայ, ինչպէս բոլոր հին ձեռագիրները: Սեփօրիմ կոչուած մասնաւոր գեղադիր պալիրներ այդ մագաղաթին վրայ կ'ընդօրինակեն Օրինաց Գիրքն, անհամար զգուշութիւններով: Գրչութեան ամբողջ տեսողութեան միջոցին պէտք է անոնք աշօթքի դիրքի մէջ գտնուին, այսինքն՝ ունենան ձախտնուն վրայ Ս. Գրքէն այլեւայլ տուներ պարունակող տուփ մը, ձախ ձեռքն ու բազուկը շրջապատուած կաշիէ փոկով մը եւ գլխուն ու ուտերուն վրայ ծոպաւոր սեւ ու ձերմակ շղարշ մը, որպէսզի մօրուքի ոեւէ անմաքուր մազ չդպչի նուիրական մագաղաթին:

Երեւակայեցէ՛ք այդպիսի ձերունի դպիր մը Սէվիլի, Տրանիֆօրթի կամ Ամսթէրտամի իր կրպակին մէջ, շրջապատուած կազամարնեքով եւ գրիչներով եւ քովն ալ գոյլ մը ջուր, ուր ան կը լուայ իր ձեռքերն ամէն անգամ որ Տիրոջ անունը պիտի գրէ մասնաւոր մեխանով ու գրիչովը: — Կան աւելի մոլեռանդ սէփօրիմներ, որ ամբողջ մարմնով կը լուացուին սինակօկի քով գտնուող աւազանին մէջ ամէն անգամ Տիրոջ անունը գրելէ առաջ: Թօրաներ կան, որոնց պատրաստութիւնը տարիներ տեւած է, որովհետեւ սէփօրիմը օրական 15-20 անգամ լուացուածէ աւազանին մէջ:

Համայնքի մը պատիւն է մէկէ աւելի Թօ-

րաներ ունենալ սինակօկի պահարանին մէջ: Սոդոմոն Իմաստունի կնիքը կամ Յուդայի առիւծները ներկայացնող նկարներով ասեղնագործուած թաւեայ վարագոյրին ետեւ երբեմն տասը տասներկու թօրաներ կը գտնուին՝ իւրաքանչիւրն առանձին մետաքսեայ պատեանի մը մէջ գետեղուած: Ամէն շաբաթ մէկ հատ կը հանեն անոնցմէ՝ կարգալու համար աւուր պատշաճի, ինչպէս մեր եկեղեցիներու մէջ կը կարգացուի Աւետարանէն կամ Աստուածաշունչէն գլուխ մը: Տարին անգամ մըն ալ Օրէնքի Տօնին օրը ամէնը մէկ դուրս կը հանեն հանդիսաւոր թափօրներով եւ խրախճանքներով:

Արեւմտեան Եւրոպայի մէջ աւելի լուրջ կերպարանք ունին այդ արարողութիւնները, բայց արեւելեան երկիրներու մէջ կը պարեն, կ'երգեն, կը խմեն եւ պարտք կը համարեն անպատճառ մատի ծայրերով նուիրական գըլաններուն դպչիլ:

ԹԱՄՈՒՏԸ

Մովսէսի Հնգամատեանէն զատ, որու ընթերցումը նուիրական պարտք մըն է ամէն բարեպաշտ հրէայի համար, կայ նաեւ Թալմուտը, որ ահագին ազդեցութիւն գործած է ազգին վրայ եւ որ ըստ աւանդութեան, այնչափ ներշնչեայ է Յաւիտենականէն, որչափ բուն Աստուածաշունչը: Սինայ լեռան վրայ Աստուած խօսած էր Մովսէսի Թալմուտի մասին, բայց արդիւած էր գայն գրի առնել, վախնալով որ մի գուցէ հեթանոսները թարգմանելով օգտագործեն գայն:

Թալմուտը*) մօտ տասներկու դրքերէ կը բաղկանայ եւ հաւաքածոյ մըն է Բարեւոնի գերութեանէն (Քս.է առաջ 500 տարի) մինչեւ Քրիստոսէ յետոյ չորրորդ դարը բոլոր անուանի բարբիներու եւ օրէնսգէտներու խօսածներուն եւ գրածներուն: Այդ բարբիներու ամբողջ մտաւոր գործունէութիւնն էր Օրէնքի

*) Քարայիմ կոչուած ազանդը կը մերժէ Թալմուտն իբր աստուածային ներշնչումէ բխած եւ նուիրական կ'ընդունի միայն Օրինաց Գիրքը. այս ազանդին պատկանողները — իբր 15,000 — կը բնակին Ղրիմի թերակղզիին մէջ: